Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16391

361
F-13

2010

477 Бакинский отчетъ Бакинскаго археологическаго общества за 1873 год
Инв. 471
361
Г-13
368

ՏԱՐԵՀԱՆԴԷՍ

ԿԱՄ ՀԱՇԻՒ

Յօրինեաց Բագուայ Հայոց Մարդասի-
րական Ընկերութեան Անդամ և Ատե-
նադպիր Սերգեյ Տ. Մ. Վարշամեանց.

վասն 1873 ամի:

M. Varchamiants,
secrétaire de la Société philan-
thropique pour 1873
Bakou, 1874
Imp. de la Société Stil..
ПЕТЕРБУРГСКАГО МУЗЕУМА АЗІАТСКАГО
SIG. MUS. ASIAT. C. A. PETR.
ПАМЯТОК
ИСТИ
ВОСТО

ԲԱԳՈՒ.
Մարդասիրական Ընկերութեան Տպարանումը.
1874.

261
Г-13

Գրքեր ստացած Թիֆլիսի արհեստների հասարակության մեջ 1873 թվի
Նոր. 471.
361
Բ-13
368

ՏԱՐԵՀԱՆԴԷՍ

ԿԱՄ ՀԱՇԻՒ

Յօրինեաց Բաղուայ Հայոց Մարդասի-
րական Ընկերութեան Անդամ և Ատե-
նադպիր Սերգեյ Տ. Մ. Վարշամեանց.

Վան 1873 ամի:

SIG. MUS. ASIAT. C. ПЕТЕРБ. ASIATCKAGO MUZEUMA
БИБЛИОТЕКА

ԲԱՂՈՒ.
Մարդասիրական Ընկերութեան Տպարանումը.
1874.

361
Բ-13

Дозволено Цензурою. Тифлисъ 22-го Марта 1874 г.

2002

Carm.
471.

ՏԱՐԵՀԱՆԳԷՍ

Կամ հաշիւ յօրինեալ 'ի դիմաց խորհրդական Անդամոց ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԵԱԼ 'ի Բազու Մարդասիրական Ընկերութեան, յաւենադպրէ նորին 'ի Սերգեյէ Վարշամեանց և ընթերցեալ առաջի Անդամոց ընկերութեան 'ի 27 Յունվարի 1874 ամի, յաւուրն չորրորդ տարեդարձի նոյն ընկերութեան:

Այսօր ահա՛ տասն երրորդ տարին է, որ մեր Պարսկահայաստան Մարդասիրական Ընկերութիւնը կերին Դախանամութեան աներևոյթ աջոյ զօրութեամբն իւր անշան և սակաւագումար դրամական միջոցաւ կարողացել է տևել այս քան ժամանակ և մեր հեռաւոր և մօտագոյ ազգայնոց մէջ ստանալ նշանաւոր և բազմաշնորհ անուն և հարմարութիւն է պատճառը, որ այդպիսի միաբանական ընկերութիւն մնացել է մինչ ցօրս անշարժ և իւր Հզօրութեան ու հաստատութեան գաղափարաց վերայ անսասան, եթէ ո՛չ նորա Ստուածապրոշմ տիտղոսը, որ կրում է բարեգործական նպատակաւ իւր ճակատին յանուն սրբոյն Գրիգորի, որոյ անտանելի տանջանաց և չարչարանաց ծնաք մեք հեթանոսութեան խաւար կեանքից 'ի լոյս Ստուածդիտութեան ու մարդասիրութեան:

Այսօր ընկերութեան տարեդարձի չորրորդ շրջանն է, որ նորա անմոռանալի յիշատակաց արժանի անդամները իւրեանց Սրբազան պարտաւորութիւնք և պարտքը ճանաչելով ժողովուելն միասիրտ և միահոգի այս դահլիճում, Խորհրդական Ընդամոց վերջին 1873 թուականում ցոյց տուած գործունէութեանց մասին հաշիւ պահանջելոյ աղագաւ:

Այսօր Խորհրդական Ընդամք ուրախութեամբ սրտի պատրաստ են մատուցանել իւրեանց դրամական տնտեսական և այլ գործունէութեանց հաշիւը, ներկայ գտնվող անդամոց քննադատութեանը. սակայն մի և նոյն ժամանակ տրտմութեամբ սրտի պիտի խոստովանեն, որ նրանց ձեռները 'ի տեղի զօրանալոյ օր ըստ օրէ թուլանումեն և չեն կարողանում առաւօրէն գործ գործել յօդուտ մեր հասարակութեան անկար, կարօտ և տնանկ մասին և յօգուտ մեր ուսումնակարօտ փոքրիկ զաւակներին, որովհետև մեր հասարակութեան իւրաքանչիւր անդամը եթէ ունենար զգացող սիրտ և լաւ հասկանար թէ ի՞նչ ասել է եղբայրասիրութիւն կամ ազգասիրութիւն, յայնժամ, որ քան որնա իւր մարմնոյ կեցութեան և ապահովութեան հոգսերով ճապաղված, ժամանակիս տնտեսական և շռայլ նորաձևութեանը կարողանում է անվրդով հետևել և չխնայելով վատնել մեծաքանակ գումարաց գումարները աշխարհիս անցաւոր վայելչութեանց համար, այնքան և ազգային կամ հասարակութեան գործերին հետևելով և մասնակից լինելով անտարբեր չէր մնալ որպիսի և իցէ օգտաւէտ ձեռնարկութեանց կամ բարոյական շինուածոց մէջ, ապ[illegible] կարողութեան

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԱՅԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясняна
5051
364/5-66

նպաստամատոյց կ'լինէր կամ դրամական հնարներով կամ շահաբեր խորհուրդներով։

Այսօր Խորհրդական Ընդամբ ցաւօք սրտի պիտի յայտնեն, որ և հենց ընկերութեան Ընփոփոխ և Տարեկան Ընդամոց կողմից մի արձագանք չի լսվեց այսքան տարիներում, թէ այս մանաւոր դրամագլխով ի՞նչ ձևով են յառաջ տանում ընկերութեան գործը, կարողանում է արդեօ՞ք Խորհուրդը լցուցանել այն կարիքները և իրաւացի պահանջները 'ի կողմանէ զանազան անձանց առաւելապէս 'ի կողմանէ աղքատ ուսանողաց, որերը անդադար դիմումեն որպէս ուսման համար սովածներ և ծարաւիներ, դէպ'ի ընկերութեան չքաւոր ազգը. և թէ ի՞նչէ պատճառը, որ մեր երկանռ ուսումնարանաց մէջ ուսանող տղայքը և աղջկունքը Ռուսաց և հենց իւրեանց Մայրենի լեզուն և արհեստները դժվարութեամբ են սովորում, չ'նայելով որ Խորհրդական Ընդամոց կողմից, որքան ջանք և հնարներ է գործ դրվում այս երկու դպրոցաց աննախանձելի վիճակը բարւոքելու աղագաւ։

Ա՛երջապէս այսօր Խորհրդական Ընդամք Ձեր յիշողութիւնը դարձուցանելով դէպ'ի անցեալ 1870, 1871 և 1872 ամաց տպագրած հաշուադարութեան հանդէսը, ուր Խորհուրդը իւր ատենադպրի լեզուաւ բացարձակ արտայայտել է փոքր 'ի շատ է մարդկային պարտաւորութեանց ամենագլխաւոր մասերը, մեր ազգայնոց մէջ ներկայումս թագաւորող զանազան մոլութիւնները մեր ծնողաց և. որդւոց բարոյական հիւանդութիւնները և մարդասիրա-

կան ընկերութեան իւրաքանչիւր Ընդամոյ պարտքը այնպէս որ, եթէ Ձեր ազատ ժամերից մի քանիսը նուիրէք և կարդաք մտադրութեամբ գլխէ՝ ի գլուխ, յայնժամ կարողէք հասկանալ թէ ի՞նչ նպատակի (համար) և դաղափարաց վերայ է հաստատել մեր Օգոստափառ Կայսրը տեղւոյս Մարդասիրական ընկերութիւնը,—պարտաւորվածեն իւրեանց տարեկան մնտեսութեան համարը տալ Ձեզ. քաղուածք անելով Խորհրդոյն ժողովոյ իւրաքանչիւր նիստերում ամենահարկաւոր առաջարկութեանց վերայ սահմանադրած օրադրութիւններից և. ապա յիշել անունները այն անձանց, որերը 1873 թուականում բարեհաճել-են մտանել ընկերութեան անդամոց շարքը։

Ձեզ. քաջ յայտնի է, թէ ո՞րպէս հաստատուն և օրինաւոր ձևով կատարվեց ընդհանուր ժողովում՝ ի 11 փետրվարի անցեալ 1873 ամի ընտրողութիւնը մեր Նախագահի և Խորհրդական անդամոց. չէ անյայտ Ձեզ և այն, որ ամենայն գործ, եթէ գեղեցիկ և օրինաւոր ձևով սկսվեց, մի և նոյն ձևով կ'ընթանայ մինչ ց վերջ, եթէ համբերութեամբ շարունակեմք գործը։

Մեր Նախագահ Գ. Երանելի Պաւել Շ. ամիրեան Մելիք-Գէլդարեանցի ընկերութեան ծանր և գլխաւոր պաշտօնի յանձն առնելը, կարելի է ասել մի նոր աշխոյժ և փափագ զարթեցոյց Խորհրդական անդամոց սրտերում այնպէս, որ Խորհրդոյ իւրաքանչիւր նիստը ստանում էր մի նոր հոգի և տարօրինակ նշանակութիւն։ Այն խմաստուն առաջարկութիւնները, բարեմաղթութիւնները, որ բղխում էին առատօրէն նորին Գերազնվութեան քաղցր և մարդասէր

հոգուց, այն հայրական գութը և կարեկցութիւնը, որ մի քանի օրինակներով ցոյց տուեց մեր ազգի ամենաթշուառ և ուսումնակարօտ երիտասարդներին, այն հոգսերը և բարեկարգութեանց ջանքը և աշխատութիւնը, որ գործ դրեց երկսեռ ուսումնարանաց վերայ, անձամբ անձին անդադար այց առնելով, յորդորելով, խրատելով, գովելով, հայրական խնամքի և սէր ցոյց տալով ուսանող աշակերտներին և աշակերտուհեաց, բացեցին մեր առաջին մի նոր տապարէզ և թողին մեր անդամոց սրտերում կնքված մի յաւերժական յիշատակ այնպէս որ վերջին ժամանակներում ընկերութեան պաշտօնակատար անձինք պիտի երանի տան այն օրերին և ժամերին, երբ կարողանում էին կամ միջոց ունէին յանուն ազգի և յօգուտ հասարակութեան, մի պտուղ ցոյց տալ:

Այժմ գնանք դէպ'ի յառաջ և տեսնենք թէ ի՞նչով է պարապել Խորհուրդը այս մի տարուայ միջոցում:

Առաջին նիստում, որն որ կազմվեցաւ 'ի 17-ն Փետրվարի ընդ նախագահութեամբ պարոն Մելքոն-Բէգլարեանցի և խորհրդական Ընդամոց Խաչատուր Բանանեանցի, Հերսէս Արասիրնիկեանցի, Գրիգոր Թումայեանցի, Յակոբ Ապրեսեանցի, Սերգեյ Պարշամեանցի, Առաքել Ծատուրեանցի, Գրիգոր Այվազեանցի և Գրիգոր Գիլբարեանցի, նախագահը մանրամասն տեղեկութիւն ստացաւ ընկերապետական գումարաց կողմանէ, և առաջարկեց հետևեալ հարցերը, նախ հաշիւ առնել օրիորդաց դպրոցի տարեկան և հասարակօրէն բոլոր հարկաւոր ծախուց, վասն հաստատութեան, երկրորդ ել ու մոլց մատեանը վերա-

նորոգել համաձայն 42, 43 և 44 յօդուածոց կանոնադրութեան. երրորդ ընկերութեան ուսանող որդեգիրների համար նշանակած դրամների անընհատ գործածութեան առաջը առնելով, հաստատել այս նպաստը և շարունակել տալ այնմիկ 'ի նոցանէ, որ ունի արժանաւորութիւն ըստ իւրում աշխատանաց. չորրորդ ընկերութեան դրամագլուխը որովհետև մինչև ցայսօր գտանվումէր Գանձապետ Թումայեանցի մօտ, յետ այնորիկ վճռեալ թէ ո՞ւմ պետքէ յանձնած, որ ևս առաւել ընկերութիւնը կարողանայ օգուտ ստանալ։

Ընդ.ամք խորհրդակցելով վերոյիշեալ հարցերի վերայ Սահմանադրեցին.

'Ի կատարումն առաջին և երրորդ հարցերի Խորհուրդը հաստատեց հետևեալ ծախսերը, որ յընթացս 1873 թուականի պիտի լինէին.

ա.	Օրիորդաց ուսումնարանի վարժուհւոյ տարեկան վարձը — — — —	240 Ռուբ.
բ.	Օրէնուսոյց հայոց լեզուի և գեղեցկագրութեան նոյն դպրոցում Խորէն նորընծայ քահանայի ռոճիկը — — — —	200 Ռուբ
գ.	Պահապանին (ստորօժ) — —	60 ,,
դ.	Վ. առելափայտի — —	50 ,,
ե.	Ղորս որդեգրաց — — —	400 ,,
զ.	Ծողովոյն խորհրդոյ դրադրի և գործապահի — — — — —	100(*),,
է.	Գործավարական այսինքն Կանցելարի մանր	

(*) Ատենադպիր Վարշամեանցն և Անդամք—Թումայեանցն, Այվազեանցն և Ծատուրեանցն այս ծախսի առաջը առին կատարելով անվարձ դրադրութեան և գործապահութեան պաշտօնները։

ծախուց- — — — — 50 ռուբ.
ը. Հինուիթեան կարկատանաց (ռեմոնդ) 100 „

Ընդ ամենը . . 1200 ռուբ.

Այս ծախուց անարկել գործածութեան համար տալ գիտել դանձապետ պարոն Թումայեանցին պարտաւորելով նրան, որ այսուհետև ո՛չ մի դրամական յօդուած, ո՛չ ելից և ո՛չ մտից չի գրել մատենում առանց պարտուպատշաճ ստորագրութեան ստացող անձի և դրաւոր հաստատութեան, վերոյ յիշեալ յօդուածները 'ի նկատի ունենալով:

'Ի կատարումն երրորդ առաջարկութեան "Նախագահի յանձնել Ատենադպիր պարոն Ս. արշամեանցին նամակներ պատրաստել, որդեգրաց երկուցունց վերայ այսինքն Ռոմանովկու և Տէր Օհանեանցի, պահանջելով նոցանից օրինաւոր տեղեկութիւն իրանց ուսման ասպարիզում ցոյց տուած յառաջադիմութեան կողմանէ:

'Ի կատարումն վերջին չորրորդ հարցի. Ընդամենը ունենալով պարոն Թումայեանցի վերայ մեծ հաւատիք և չ ունենալով ոչ մի կասկած նորա հաւատարմութեան մասին, միաբերան խնդրեցին նրան քաջառաջնոյն շահեցուցանել նորա ձեռքին գտնված ընկերութեան զուտ գումարը ընդ ամենը 5714 ռուբլի, բայց—միմիայն ո՛չ պակաս քան զ12% իւր լիակատար պատասխանատուվութեան ներքոյ ապահովացուցանելով խորհրդական Ընդամենին առանձին ձեռագրով, իսկ յետ լրանալոյ տարւոյս բոլոր գումարը հանդերձ իւր շահովը առաջի առնել Խորհրդոյ ժողովոյն:

Այլ, ինչ որ վերաբերում է 45 հատ 2-դ փոխարինութեան խաղարկական բիլեթների, որ գնված է և բաղկանում է 4702 ռուբլի 50 կոպ. դումարից, յանձնել պարոն Թումայեանցին, յետ առնելոյ այս բիլեթների Մոսկվայի վաճառականական բանկից, իսկոյն առաքել տեղւոյս Գաւառական արքունի գանձարան 'ի դիմաց Խորհրդոյ. հուսկ յետոյ երբ գանձարանը ընդունեց նոյն բիլեթները իւր դրամահատարանը, հրատարակել 'ի մէջ ընկերութեան անդամոց և հասարակութեան տեղւոյս, հրաւիրելով նրանց որ ընդունին և գործադրեն 'ի դրաւադարութիւնս մէջեալ բիլեթները և երբ 'ի մէջի նոցա յայտնուեցաւ ցանկացող անձն, յանժամ թղթադրամները յանձնել նմա համաձայն 45 յօդուածի կանոնադրութեան, նշանակելով մի և նոյն ժամանակ պատշաճաւոր տոկոսիք յօդուտ Ընկերութեան (*)

Երկրորդ նիստում որ 'ի 20 Փետրվարի, ընկերութեան տարեկան անդամ Գրիգոր Ղարձելեանցն 'ի ներկայութեան Խորհրդական Ընդամոց յայտնեց թղթով իւր ցանկութիւնը, վեր առնելու ընկերութեան տպարանը կապալաւ իւր ամենայն պարագայիւք և սենեակներով երեք տարի ժամանակի տալով տարեկան վարձ 500 ռուբլի:

(*) Որովհետև վերոյիշեալ բիլեթների համար չ'գտնուեցաւ տեղս այնպիսի հաւատարիմ անձն, որին կարելի լինէր տալ շահեցնելու համար ապահով գրաւներով համաձայն 45 յօդուածի կանոնադրութեան, վասնորոյ Խորհուրդը բարւոք և օգտաւէտ համարեց մի առ ժամանակ էս թողնել նրանց Մոսկվայի բանկում:

Մինչ ցվճռելը այս առաջարկութեան, Խորհրդական անդամք յայտնեցին թէ տպարանը գտանուելէ Շուշաքաղաքացի պարոն Թաւրիզեանցի կառավարութեան ներքոյ տնային կերպիւ, ուստի ըստ հրաւիրման պարոն Նախագահի, ներկայացաւ և Թաւրիզեանցն 'ի Խորհուրդ յայնժամ, երբ արդէն հրաժարված էր պարոն Պարձելեանցն, և յայտնեց մի և նոյն ցանկութիւնը, յարակցելով՝ թէ տպարանը մի և նոյն դրութեամբը, որոյ մէջ գտանվելուն նա այժմ, չի կարող անբաբելի ձևով կատարել այնպիսի տպագրելի գործերը, որոյ համար բացի՛ լոկ մամուլների և տառերի, հարկաւորէ ունենալ 'ի պատրաստի զանազան տեսակ սպիտակ թուղթ, թանաք, և այլ գործավարական պիտոյք և վերջապէս երեք վարձուած գրաշարներ, որ տպարանը կարողանայ տպելով և վաճառելով երկպատիկ օգուտ ստանալ. Բայց որովհետև այս օգուտը դժուարանէ ձեռք բերել առանց հետ զհետէ լրացուցանելոյ և նախապատրաստելոյ վերոյիշեալ պիտոյից, որոց համար չ'պիտի խնայել առաջին նուագում գոնեայ մինչ ց 2000 ռուբլի, վասնզոյ և նա Թաւրիզեանցն չի խոստանում մի զգալի և արդիւնաբեր պտուղ տպարանի կողմից։

Նախագահը լսելով զայս և ունենալով 'ի նկատի, որ ընկերութիւնը այժմեան գրական հնարները թոյլ չեն տալիս դուրս գալ այն քանակութիւնից, որն որ նախընթաց օրագրութեամբ նշանակվածէ տարեկան անհրաժեշտ ծախուց համար, վասնզոյ խորհուրդ առնելով այս մասին անդամոց հետ 'ի միասին եզրակացուցին, որ տպարանը մինչ ց ընկերութեան գումարաց աձելը պահպանել գոնէ միջակ

ձևով և այժմ տալ ի վարձու այնորիկ ի վերոյիշեալ անձանց, որն որ հաւատարմագոյնէ։ սակայն պարոն Թաւրիզեանցն ըստ վկայութեան խորհրդական անդամոց հանդիսացաւ որպէս հաւատարիմ անձն և խոստացաւ յետ բազում համոզման Նախագահի տալ հարիւր ռուբլի առաւել քան զ Վարձելեանցն, այսինքն 600 ռուբլի։ ուստի յանձնեցաւ Ստեփանոսին, պատրաստել պայմանագրութեան նախագիծը և մատուցանել Խորհրդոյն, իսկ պարոն Վարձելեանցին յայտնել, թէ Խորհուրդը ըստ վերոյ գրեալ պատճառանաց, ընկերութեանս օգուտը պահպանելու աղագաւ, չի կարող համաձայնել այն գրաշանց հետ, զորն առաջարկումէ նա իւր ծանուցագրում։

Վերոյիշեալ հիման վրայ պարոն Թաւրիզեանցն սկսեալ ի 1 Մարտի 1873 ամի կառավարումէ ընկերութեան տպարանը, հատուցանելով իւրաքանչիւր տրեստ պայմանագրեալ գումարը։

Գերագնիւ Նախագահը յԱպրիլի առաջարկեց խորհրդոյն քննել և կարգադրել թէ որպիսի ձևով հարկաւորէ ի ծախս հանել ել ուսից մատենում գործածութիւնը հասարակօրէն բոլոր գրամոց, այնպէս որ ընթացական ծախսերը հաստատվին կամ ստորագրութեամբ ստացող անձին և կամ Գանձապետից մատուցեալ առանձին հաշուով։

Այս հարցի վերայ անդամք միախորհուրդ սահմանադրեցին. նախ՝ այնպիսի գրամական գործածութիւնը, որ պետք է ի ծախս մտցնել շարունակ զորօրինակ վարժապետաց ռոճիկը և այլ վարձատրութիւնք կամ նպաստաւորութիւնք պիտի անպատճառ

հաստատուն ստացողի ստորագրութեամբ հաշուամատնում, երբոր դրամը ձեռն առ ձեռն է տուլում։ Երկրորդ՝ եթէ պատահեց որ պէտք է առաքլի որպիսի և որքան և ինչ գումար մի այլ քաղաք փոստայիւ, յայնժամ այս յօդուածը, ելից մատեանում պէտք է հաստատուի փոստային կառաւորութիւնից ստացած մուրհակով. իսկ եթէ խորհուրդը հարկաւոր համարեց առաքել ուր և ինչ հաւատարիմ անձի ձեռամբ, յայնժամ ստացողի ծանուցագիրը ծառայում է 'ի տեղի հաստատութեան։ Երրորդ՝ որ ինչ վերաբերվում է անակն ունելի կամ անհրաժեշտ մանր ծախուց զորօրինակ թղթի, թանաքի և այլ գործաւարական հարկաւոր պիտոյից, գանձապետին յանձնել ժամանակ ժամանակ մատուցանել խորհրդին առանձին մանրամասն հաշիւ 'ի հաստատութեան նախագահի։

Նախագահը իւր Խորհրդակից Անդամների հետ Ապրիլ ամսի վերջերում իւրեանց հայեացքը դարձուցանելով օրիորդաց դպրոցում ուսանող աշակերտուհեաց յառաջադիմութեան վերայ և մի մանաւոր ձևով հարց ու փորձ առնելով աղջկերանց, գտին որ այս գեղեցիկ մանուկները, չ'նայելով վարժապետաց անխոնջ աշխատութեանը, թոյլ կերպով են ընթանում դէպ'ի յառաջ իւրեանց ուսման ապարիզում և քննելով բոլոր արդելաւորներն ներքև այն հանգամանքները, որերը որքան վերաբերումեն կառավարչաց և ուսուցչաց Սրբազան պարտաւորութեան, այնքան և ծնողաց անհոգութեան, օգտաւէտ համարեցին ուսումնարանին նիւթական և կառաւարչական մասը մի կանոնաւոր գաղափարի վերայ հիմնել։

Խորհրդական Ընդամք կամենումեն ասել թէ ամենեքեանքդ լաւ հասկանումէք, որ ուսումնարանը առանց վերատեսչի մի և նոյնէ, ինչպէս մարդ առանց գլխոյ։ Մարդասիրական ընկերութեան նիւթական հնարները կամ պարտը ասած նորա դրամագլխի օր ըստ օրէ նուազիլը, չէր թոյլ տալիս գտնել մի անպիսի բանիմաց անձն, որին Ընդամք կարողանային յանձնել վերատեսչութեան պաշտօնը և դուցէ սաէ եղել պատճառը, որ այս քանի տարվայ ընթացքում դպրոցը չի կարողացել պատրաստել մի քանի ընդունակ աշակերտուհիներ, բայց չ՝պիտի լռենք, որ ծնողաց կողմից ևս չի երևացել ո՛չ մի հետաքրքրութիւն, պահանջ և կարեկցութիւն որով Ընդամք կարողանային իրանց խրախուսել և նոր սիրտ առած ջանք անել բարեքերու ուսումնարանի թոյլ ընթացքը։ Այս պատճառաւ Ընդամք վերոյիշեալ երկպատիկ պակասութեանց առաջը առնելոյ համար հեռևեցին գտնել մի այնպիսի վերատեսուչ, որ կարգաւորէ և վերանորոգէ ուսանելի առարկայից կամ դասաւորութեան ձևը և աշակերտուհեաց սրտում մի նոր եռանդ ուսումնասիրութեան զարթուցանելով, կարողանայ քաղցրացուցանել նորանց քմաց մէջ ուսման ճաշակը, որով կարողանան դուրս գալ, որպէս թէ, մի նոր թև առած վիթամտութեան աշխարհից դէպ՝ի լոյս։

Մի այդպիսի վերատեսուչ, որին ընկերութիւնը՝ի վաղուց հետէ որոնումը և չէր կարողանում ճարել, Ստուած իւր նախախնամութեամբը առաքեց մեզ։ Այս ազնիւ պարոնը, որ երբեմն Տփխիսի Գայեանէ օրիորդաց դպրոցի գործակից և մանա-

կից է եղել, ինչպէս յայտնի է մեզ, համարեայ մի նոր հոգի է տուել այնտեղ ուսանող աշակերտութեաց, իւր ազգասիրական հոգեւոքը, մեր գերապատիւ Ղազախապահի Հոր եղբօր որդի Յովսեփ Մելիք Ռեգլարեանցն է։

Սա գալով տեղս և յառաջագոյն տեղեկանալով մեր երկսեռ ուսումնարանաց, ուսանող մանկանց և սոցա ուսանելի առարկայից կողմանէ, Գերապատիւ Ղազախապահի առաջաբկութեամբը, մեզ Խորհրդական Ընդամենելիս յայտնեց իւր սրտի փափաքը, խոստանալով 'ի սէր ազգի, 'ի պատիւ և 'ի փառս տեղւոյս հասարակութեան, վերատեսչութեան ծանր լոյծը առանց մի ակնկալութեան յանձն առնուլ, քանի որ ինքը այս քաղաքումը կ'մնայ և մինչև որ ընկերութեան դրամական հնարները ուժոքնալով թոյլ կ'տան զլխովին վերանորոգել կառաւարութեան կարգը. ուստի առանձին օրադրութեամբ 'ի 23 Ապրիլի Խորհուրդը հաստատելով Յովսէփ Մէլիք Ռէգլարեանցին վերատեսչութեան պաշտօնում, յանձնեց նորան օրիորդաց ուսումնարանի կառավարութիւնը։ Մի և նոյն ժամանակ ոգեաբարձուք տղայոց ուսումնարանի առանձին գրութեամբ հրաւիրեցին Ինդրանոք յիշեալ պարոնին առնել իւր կառավարութեան և վերատեսչութեանները թէ տղայոց դպրոցը։

Ի՞նչ գործ գործեց Յովսէփ Մելիք Ռէգլարեանցն այս լեռն ամառայ ընթացքում և ո՞րպիսի վերանորոգութիւն, կարգ և հանդիսաւոր հարցաքննութիւն ցոյց տուեց տեղւոյս հասարակութեան, կամ երկսեռ

ուսումնարանաց աշակերտների սրտերում ինչպիսի՞ եռանդ և սէր շարժեց դէպ՛ի ուսումը, ձեզ ամենեցունցդ քաջ յայտնի է, թողուած ասել հորա միւս ազգօգուտ առաջարկութեանց կողմանէ, որ երբեմն Խորհրդական Ընդամոցս հաղորդում էր և որոց մասին խոհեմաբար խնդրելէ մեզ լսել։ Ա՝ասնորոյ Խորհրդական Ընդամք ձանաչելով այս պարոնի անձնազոհ և ազնիւ հոգին չեն համարձակվում մի այլ ինն կերպ վարձահատոյց լինել, եթէ ո՛չ այսօր առաջի ժողովեալ Ընդամոցդ, իւրեանց սրտի անկեղծ շնորհակալութիւնը յայտնել, հայցելով ՝ի տեառնէ, որ նա իւր կարող չօրութեամբը, անվտանգ պահեսցէ Յովսեփ Մելիք-Ռէզլարեանցին ՝ի փառս համօրեն ազգին մերոյ։

Ա՝յսուհետև Խորհրդական Ընդամք աւելորդ չեն համարում մի երկու խօսք ասել, որնոր վերաբերումէ օրիորդաց ուսումնարանին։

Ընկերութիւնը իւր համար մեծ բաղդ կ՝համարէր, եթէ ինչպէս մինչ ցօրս կարողացելէ առանց վարձու և կամ այլ ինն կողմնակի օգնականութեան կառավարել օրիորդաց ուսումնարանը, կարողանար և յետ այսորիկ չի պահանջել ո՛չ մի բան ծնողներից, սակայն նորանք պարտաւորվածեն ծանուցանել ծնողներին, որ հանձայն Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան, ընկերութիւնը պարտաւորէ լուսաւորութիւն տարածել մի միայն որբոց և աղքատ ծնողաց զաւակաց մէջ, իսկ եթէ այսքան տարի, մի քանի հարուստների որդիքը անարգել ընդունվելեն ուսումնարան և շարունակել իւրեանց ուսումը ան-

վարձ, որանով Ընկերութիւնը արժանի է առաւել կարեկցութեան։ Այս եթէ եկեղեցւոյ պայծառութեան նորա բակում կառուցած շինութեանց վերայ ծախս արած չ'լինէր մի մեծաքանակ գումար, այսօր հաւատացէք, որ Ընդամէնք չ'պիտի հայթայթէին մի այլ միջոց հնար կամ պահանջողութիւն, ուստի ձարահատեալ և չունենալով մի առատ աղբիւր, որով կարողանար ժամանակի պահանջման պէս բարեկարգութիւն առնել օրիորդաց դպրոցում, նշանակեցին մի մանաւոր ամսական վարձ, որն որ սկսեալ 'ի Սեպտեմբեր ամսէ շարունակաբար ստանում է հարուստ և միջակ կարողութիւն ունեցող ծնողներից, բաժանելով իւրեանց այսինքն Ընդամոց մէջ չ'քաւոր ծնողաց աղջկերքը և որբերը և հաստատելով նրանց տեղ իւրեանց սեպհականութենից նշանակեալ ամսավարձը։ Օրինակի ազատաւ ծանօթացնելով Ձեզ Նախագահի և Խորհրդական Ընդամոց մի քանի տնօրենութեանց հետ, Խորհուրդը կամենում է հաշիւ տալ Ձեզ Ընկերութեան բոլոր դրամոց մասին, հանելով այստեղ կարճ 'ի կարճոյ ելու մնից մատենից, 1873 թուականում մտած և ծախս արած գումարները։

ՄՈՒՏՔ։

Ա. 1-ն Յունվարի 1873 ամի Ընկերութիւնն ունէր բացի շինութեան տպարանի և մուրհակներով ապառիկ ստանալի դրամոց զուտ գումար 5784 ռ. 42 կ.
Դրրոդ փոխարինութեան 5% բիլեթներ 45 հատ, հաշուելով իւրաքանչիւրն 105 ռ. 50 կ. ընդ ամենը. 4702 „ 50 կ.

ԵԿԵՄՈՒՏՔ ՅԵՂԹՈՒՅՑ
1873 ԱՄԻ։

1. Դորոգ գտեալ 13 անփոփոխ Ընդամենից - - - -	1400 ռ. „
2- Դերոգ գտեալ 17 տարեկան Ընդամենից - - - -	96 „ „
3. Տպարանական արդիւնք, սկսեալ 'ի 1-էն Յունվարի մինչ ց մինն Մարտի 1873 ամի - - -	46 „ 64 կ.
4. Սկսեալ 'ի 1-էն Մարտի 1873 մինչ ց 1-ն Յունվարի 1874 ամի, Ընկերութեան պատկանեալ տպարանից, որ տուաջէր պարոն Ստուաջատուր Յաւրիզեանցին կապալաւ իւրաքանչիւր տարի 550 ռուբլիով,—ստացաւ- - -	450 „ „
5. Ընկերութեան աշակերտուհեաց ձեռագործների վիճակախաղութիւնից, որ եղև Հարցաքննութեան օրն մեաւ արդիւնք - -	204 „ 25 կ.
6. Ստանձին ընծայաբերութիւն յօգուտ Ընկերութեան բարերար անձանցմէն ընդ ամէնը - -	95 „ „
7. Ընկերութեան պատկանեալ շինութիւնից, այսինքն մէկ պատվարից վարձ - - - -	24 „ „
8, Յընթացս 1873 ամի տոկոսիք զուտ դրամոց, այսինքն 5784 ռուբլից	700 „ „
9. Ընկերութեան պատկանեալ 45 հատ խաղարկական բիլեթներից տոկոսիք - - - - -	375 „ „
Ընդ ամէնը -	13877 ռ. 81 կ.

Յընթացս 1873 ամի ծախսէ եղել։

Օրիորդաց ուսումնարանի երկու վարժապետաց Ռուսաց և Հայոց լեզուի տարեկան վարձ - -	457	ռ. 41 կ
2. Ուսումնարանի պահապանին	60	„ „
3. Տպարանն մինչ ցկապալաւ տալն վարձու ունեցած գրաշարներին տուածէ՛ հատուցած վարձս	100	„ „
4. Տպարանական ծախսէ էլած մինչ ցԼ-ն Մարտի 1873 ամի -	33	„ 60 կ.
5. Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհեաց ձեռագործի համար զանազան իրեր գնուեցաւ - -	83	„ 21 կ.
6. Պարզևաբաշխութիւն ուսուցչաց Օրիորդաց ուսումնարանի -	63	„ 50 „
7. Գնուեցաւ Նչմիածնայ տպարանից տառեր Ընկերութեան տպարանի համար իւր Ճանապարհի ծախսովն։ - - - -	367	„ 20 „
8. Պ՝ասն 1871 ամի, Օրիորդաց ուսումնարանի համար վարձեալ տան քրեհ տուաւ պարոն Կրասիլնիկեանցին - - - -	325	„ „
9. Խորհրդարանի Գործավարական ծախս և ուսումնարանի վաւելչայոյտի - - -	42	„ 65 „

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳԻՐՆԵՐԻՆ։

10 Ա. Մկրտչէլ Տէր Յովհաննիսեանցին որն ուսանումէ Ս. Պե-

ՄԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. Մ. Մասեանցի անվ.
ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук СССР
3641/5

տերբուրգի կայսերական մեդիկոխիրուրգիական Ակադեմիայումն -	150	ռ.	կ.
բ. Այրի կին Հայուհի Պատիանայ Միլանսկուն, որն ուսանումէ Ս. Պետերբուրգի կայսերական մանկաբարձութեան ձեմարանումն -	180	„	„
գ. Շամախեցի Ներսէս Աբելեանցին որն ուսանումէ Բագուայ Գիմնազիայումն - -	100	„	„
դ. Պաղախու գաւառի վերին Աղդամ գեղջ բնակիչ Սարգիս Միրզայեան Մեհրաբեանցին, որն ուսանումէ Մոսկվայի դեխնոլոգիական ուսումնարանումն - -	75	„	„
11. Նպաստ Բագուայ Գիմնազիայումն աղքատ ուսանող աշակերտաց - - - - -	103	„	96 „
11, Աղքատ աշակերտաց ծխական ուսումնարանի և աշակերտուհեաց Օրիորդական ուսումնարանի դասագրքեր բաշխուելու - - -	22	„	5 „
13. Փոստայի և հեռագրի ծախք-	15	„	36 „
14. Ընկերութեան պատկանեալ շինութեան կարկատանաց - -	3	„	35 „
Ընդ. ամենը	2212	ռ.	29 կ.
Մնում առ 1-ն Յունվարի 1874 ամի առ ձեռն պատրաստի զուտ դրամաց - - - -	6963	„	2 „
Խաղարկական բիլեթներ 45 հատ	4702	„	50 „
	11665	„	52 „
Ընդ. ամենը	13877	ռ.	81 կ.

Այս հաշուից կարողէք նկատել, որ դրամոց մուտքը հազիւ հազ կարողանում է ընթացական և հարկաւոր ծախսերի առաջը առնել, չ՝մոռանալով, որ Խորհրդական Ընդամք քանի քանի բարեգործական դէպքերից իւրեանց ձեռքերը յետ են քաշել և չ՝նայելով այն խնայողութեանը, որ մեր Ընդամ և դանձապետ պարոն Թումանեանցն իւրաքանչիւր քայլում հետևում է պահպանել օգուտը Ընկերութեան. սակայն մի և նոյն ժամանակ Խորհրդական անդամոց յոյսը մեծ է, նոքա քաջալերուածեն այն տեղեկութիւններով, որերը ստացելեն զանազան քաղաքներից մի քանի ազնաստր և բարեմիտ անձանց կողմից. բայց միևնոյն ժամանակ ափսոսումեն, որ տեղական անդամք չեն կամենում գոնէ չափաւոր ձևով կամ ըստ կարեաց կարեկցութիւն և մի մասնաւոր աշխատութիւն ցոյց տալ յօգուտ Ընկերութեան։

Մինչ ցնոր գտած Ընդամոց անունները յիշելը Խորհրդական Ընդամք չեն կարողանում լսել և չ՝յայտնել Ձեզ, որ իւրեանց ընկերներից մինը այսինքն Գ. Աբրահամեանց Յակոբ Ալբրեսեանցն, որոց հոգին, ընութիւնը, բարքը և վարքը նորա գործերից Ձեզ և մեզ յայտնի է և որոց անդատար աշխատութիւնը յօգուտ Ընկերութեան և ազգի, մեր և շատ մարդկանց սրտերում մի քաղցր և նախանձելի յիշատակ թողել։ Նա պարոն Ալբրեսեանցն, անցեալ 1873 թուականում էս ըստ առաջնոյն, ասպարէզ դուրս եկաւ վեց հոգի անփոփոխ Ընդամներ դրանելով. Խորհուրդը ո՛չ մի բանով չի կարող ցոյց տալ պարոն Ալբրեսեանցին իւր երախտագիտութիւնը, այլ կ՝խնդրէ Ձեզ՝ի խորոց սրտի միաբերան աղաղակելով ասել կեցցէ Յակոբը Ալբրեսեանցն վասն Մարդասիրական Ընկերութեան։

Ահա անուանք 1873 թուականում գտած և կամովին Ընդամուրեան պաշտօնը ընդունած պատուելի անձանց։

ՏԱՐԵԿԱՆՔ։

1· Վահան Վարդապետ Բասդամեանց 5 ռ·
2· Պետրոս Յարութիւնեան Սպանեանց 10 „
3· Մկրտիչ Փանոսեանց - - - 5 „
4· Գրիգոր Վարձելեանց - - 5 „
5· Ղէքսանդր Մելիք Ազարեանց - 5 „
6· Բախիշ Սրիբեգեանց - - - 10 „
7· Աստիճանաւոր Եփրեմ Գեղկարխանեանց - - - - - - - 5 „
8· Մի անյայտ անձն - - - 5 „
9· Խորէն Վարդապետ Ստեփանէ - 5 „

ՀԱՐՏԱՐԻՍԱՆՈՒ ԲՆԱԿԻՉՔ։

10· Սերգէյ Թելեթեանց - - - 5 „
11· Յովհաննէս Փրանգուլեանց - - 5 „
12· Գրիգոր Սերգեյեանց - - - 5 „
13· Բողդան Ելիազով - - - 5 „

ՀԱՄԱԿՈՒ ԲՆԱԿԻՉՔ։

14· Ենոն Համիտ - - - - 5 „
15· Յակոբ Բաբախանեանց - - 5 „
16· Լև Պերբեր - - - - 10 „
17· Մկրտիչ Ենաստասեան Տէր Մկրտչեան Վարաբաղցի - - - - 5 „
18 Եղոր Յակոբեան Մարդանեանց 5, „

ԱՆՓՈՓՈԽՔ։

1. Պաւել Հ՝ամիրիչ Մելիք Ռէգ-
լարեանց - - - - - - 100 ռ.
2. Յովհաննէս Յովնանեանց - - 100 „
3. Դասպար Դաւթեան Մամաջա-
նեանց - - - - - 100 „
4. Մկրտիչ Սերգեյեան Սանասարեանց 200 „
5. Աւետիս Օ՝ոհրաբեանց - - 100 „
6. Մելքոն Սարգսեանց - - - 100 „
7. Մարտիրոս Վ՝ասիլեանց - - 100 „
8. Յովհաննէս Դիլդարեանց - - 100 „
9. Կարապետ Մալքարեանց - - 100 „
10. Ներսէս Աբրահամեան Տէր Ներ-
սէսեանց - - - - - - 100 „
11. Տիկին Նազանի Հայրապետեան Ռա-
զիրեանց - - - - - - 100 „
12. Թոմաս Յովհաննեսեան Ամիրեանց 100 „
13. Սուրիանոս Ռաբալեանց - - 100 „

Ընկերութիւնը այժմ ունի երեք որդեգիրներ. Առաջինը Միքայէլ Տէր Յովհաննէսեանցն, որ շարունակում է կատարելագործել իւր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանի բժշկական մասում, ստանում է իւրաքանչիւր տարի հարիւր յիսուն ռուբլի. այս երիտասարդի բարուց և վարուց և յառաջադիմութեան կողմանէ Խորհուրդը ստացել է քանիցս անգամ նոյն համալսարանի վերատեսչից վկայութիւններ այնպէս, որ եթէ Աստուած աջողեց Տէր Յովհաննէսեանցն կարողացաւ 'ի կատար ածել իւր դիտաւորութիւնը, ինչպէս խոստացել է ոչ սակաւ օգուտներ և ծառայութիւններ ցոյց կ' տայ իւր ազգին։

Բայց որովհետև նորա այժմեան խղճալի դրութիւնը խոշտանկված լինելով չ.քաւորութան ժանիքների տակը, չեն թոյլ տալիս, որ նա իւր .քայլերը դէպ'ի յառաջ փոխէ հեշտութեամբ և հասանէ իւր ակնկալութեան վերջին աստիճանին, Խորհրդական Ընդամք մտադիր են սկսեալ 'ի 1-ն Յունվարի տարեւոյս նշանակեալ նորա համար վարձ մի փոքր աւելի .քան զոր ստանում է, եթէ այսօր ընդհանուր ժողովը անդամոց հաստատեց նորա այս մտադրութիւնը։

Երրորդ որդեգիրը Ներսէս Աբելեանցն է, որը շարունակում է իւր ուսումը տեղւոյս Գիմնազիայում և ստանում է իւրաքանչիւր տարի հարիւր ռուբլի։

Երրորդը Հայուհի այրի կին Տաղինայ Միլանակին, տեսանելով որ մեր աշխատում հոգիւ ձարվում մի ուսեալ մանկաբարձ և այս պատճառաւ մեծ վնասներ է պատահում անկիրթ, ինքնաուս պառաւներից, մինչև որ կարողանում են ձեռք բերել թանկ գնով աղքունի մանկաբարձին, դիմեց Խորհրդին և խնդրեց որ Ընկերութիւնը ընդունէ նորան իւր հովանաւորութեան ներքոյ այնպէս, որ նա կարողանայ հասնել Պետերբուրգ և անդ կատարելագործելծ վերոյիշեալ արհեստը։ Խորհրդական Ընդամք թէպէտ ընդունեցին նորա խնդիրը՝ և ցոյց տուին հնարք, որ նա կարողացաւ հասնել Պետերբուրգ, նշանակելով 'ի 24 Ապրիլի ամսական վարձ 15 ռուբլի և այժմ շարունակում է այնտեղ իւր ուսումը, բայց մի և նոյն ժամանակ յայտնելն Միլանակիին, որ այս նպաստը հետ չտրուէ նա կստանայ միայն մինչև մի տարի ժամանակ, այսինքն մինչ ցԱպրիլ ամիսը 1874

ամի, յետ որոյ նա պարտաւորէ գտանել մի այլ հմուտ հնար կամ ապրիւր իւր դիտաւորութիւնը կատարելոյ համար։

Բաց 'ի վերոյիշեալ բարեգործութեանց, անցեալ 1873 տարուայ Օրիորդաց ուսումնարանի հարցաքնութեան հանդէսը աւարտելից յետոյ ուսուցչ կրօնապիտութեան և Այոց լեզուի Յովհաննէս, իսկ այժմ Խորէն քահանայ Մելրզաբէգեանցն և Ռուսաց լեզուի վարժուհի օրիորդ Դրակլինն, վասն առանձին ջանից և աշխատութեանց, որ ցոյց են տուել աշակերտուհեաց վրայ, ըստ վկայութեան վերատեսչի ազնիւ Յովսէփ Մելիք Ռէգլարեանցի, ստացան ընկերութեան հաշուից 'ի վարձատրութիւն և 'ի խրախուսանս սրտից առաջինն մի արծաթեայ ոսկեզօծ ժամացոյց, իսկ երկրորդը՝ մի ոսկի մեդալիօն։

Խորհրդական անդամք 'ի 17-ն Նոյեմբերի ստանալով մի ազերբայջանեան խնդիր Ղազախու գաւառի Աղդամ գեղջ Սարգիս Մելքայեան Մեհրաբեանցէ հանդերձ վկայականաւ վասն չքաւորութեան իւրոյ, որով նա խնդրելէր ընկերութենից օգնութիւն, որ կարողանայ իւր ուսումը շարունակել Մոսկվայի վերին ուսումնարանների մէկում, ընծայեցին իւրեանց սեպհականութենից եօթ անասուն և հինգ ռուբլի և այս գումարը հատուցին վերոյ անուանեալ երիտասարդին։

Որովհետև Օրիորդաց ուսումնարանի վարժուհի Դրակլինն տնային հանգամանքներից հարկադրված իւր յօժար կամօք հրաժարուեց այս պաշտօնից, վասնորոյ ըստ վկայութեան Զերաշնի Նախագահի և վերատեսչի վասն բարուց և ընդունակութեան Օրիորդ

Զինախառայ Պ. տրնիկի, խորհուրդը հաստատեց այս վերջինս 'ի տեղի Դրակինին, նշանակելով ամսական ռոճիկ 25 ռուբլի։

Պ. երջապէս Խորհուրդը աւելորդ չի համարում յայտնել Ընդամոյդ, թէ անցեալ 1873 թուականում Խորհրդական Ընդամոյ իւրաքանչիւր եօթն օրէից չորեքշաբաթի օրերում նշանակած նիստերը՝ Դպրոցահը իւր ընկերակիցների հետ այց առնելով շարունակաբար, կազմելն նրան անընդհատ, թէպէտ մի քանիսը Ընդամներից օրինաւոր պատճառաւ ներկայ չեն գտնուել մի քանի նիստերում, բայց 'ի վերայ այսր ամենայնի նոցա բացակայութիւնը չի կարողացել խորհրդոյն ժողովոյ նիստերը կազմող կանոնադրեալ Ընդամոյ ձայները նուազացնել։

Այժմ մեր Դ-երպոյին Դպրոցահից և Խորհրդական Ընդամներից կ'խնդրեմ ինձ թոյլ տալ երկու խօսք ասել մեր Ընկերութեան Ընդամներին, որ այսուհետ այսօր ժողովուած կան և արանով Խորհրդոյ հաշիւը վերջացնել։

Սերիլ բարեկամք 17 տարի իմ ծնած տեղից այսինքն Շամախիից հեռանալով և մի ազատ միջոց չունենալով դեռ այնտեղ, որ աչք տեսանեմ երկրաշարժութեան և զանազան զրկանքների հետևանքը և ժողովրդականաց նեղկայ դրութիւնը. այս օրերս Ուսուած աջողից և ես ոչնչարերցի գնալ և երկու օր միայն այնտեղ մնալով, շատ օրերի և տարիների համար իմ սրտիս վերայ ցաւեր և վերքեր բառնալով վերադարձայ Բագու։ Սերելիք ես չեմ ցաւում նորա համար, որ քաղաքը քարուքանդ եղած

հոյակապ տները հիմն ու վեր տապալած Եռանուամեն բուռց բնակարանի և համարեա հին դերեզմանատան այլ ցաւումեմ, որ այս բազմաբոլոր քաղաքը առաւելապէս մեր հայ եղբարք, որդեկորոյս հօր պէս ցիրուցան են եղել աշխարհիս երեսով, և թէպէտ ճանաչելն մի քանի անհատներ, սրանքէլ սրտաբեկ, կորաղլուխ, շուարուած, առանց յուսոյ և ակնկարութեան, շրջումեն այս աւերակների մէջը ապատելով ահա՛ այսօր, ահա՛ վաղը պիտի վերջին հարուածը ժամանէ և տգա հատանեն իրանք թշուառութեան և յուսահատութեան վերջին ատիճանին:

Ես միտք չունիմ սիրելիք Երեմեայի ողբը կարդալ Ձեր գլխին, այլ կամենումեմ ասել, որ Հայաստանի, եթէ մնանումէ մեռելութեան, տակայն Բաղդան սկսէլ կենդանանալ, ընդունելով իւր մէջը շատ գաղթականներ, բան մեծ մասին մի և նոյն Հայանախնցիներից. ուրեմն այսուհետև Պարզանիան ընկերութիւնը պիտի մեծ գէր խաղայ իւր դործունէութեան ասպարիզում. այն դրամական հարտները, որով որ այժմ ընկերութիւնը շատ նեղութեամբ կարողանումէ միակերպ կառավարել և պահպանել Օրիորդաց ուսումնարանը կամ մի քանի երիտասարդներին նուազ ուժ և զօրութիւն տալ, որ լեռնանց ուսումը կատարելագործեն, բաւական չէին եւս այսորիկ առաջը առնել այն յուրձանքի և յեղափոխութեան որն որ ամենքիս քեանքս տեսնումենք այսօր Բաղդու քաղաքում:

Ես կամենումեմ ասել, որ Բաղդուն օր ըստ օրէ աճումէ, զեղեցկանումէ և իւր ամրութեան սև զգեստը մի կողմ քցելով, կամէնումէ յառաջ վազել, ընկերութիւններ, շինութիւններ և զորձարաններ

կառուցանելով և ձեռնամուխ է լինում զանազան նորանոր ձեռնարկութեանց։ այս տեղ մեր Հայերի համար աշխատասիրութեան պողոտայ է բացուել, բայց միևնոյն ժամանակ տեսնում մեք որ մեր Հայերը ամենք բռնած իւրեանց քսակների բերանները, շուտ շուտ միաւորվում են անձամբ և ցանկանում են, որպէս թէ միաբանութիւն կազմել, բայց սրտով հեռածաց են միմեանցից։ Նրանք լաւ հասկանում են որ ուր չ՚կայ միութիւն, այնտեղ և չ՚կայ սէր, ուր չ՚կայ սէր, այն տեղ չ՚կայ և մարդասիրութիւն։ իւրաքանչիւրը մեզանից կամենում է առանձին ժողովել գանձ և հարստանալ, որ զարմացնէ նրան, որն որ տկարէ և բաղդազուրկ, բայց պիտի իմանաք, որ սա մի սանդուղքէ, որով մինը վերէ երանում և միւսը վայր իջանում, ինչպէս կասեն այսօր ի՞նչ վաղն ի՞նչ, այլ օրն յինչ, եթէ ո՛չ ի՛ հող։ Ուրեմն սիրելի՛ք, օրինակ ունենալով մեր առաջ մեր հարևան Շ՚ամախի քաղաքը, իւր բոլոր արկածներով, պէտք է աշխատենք մեր միաբանութեան տունը չ՚քանդուի, մեր այս Պայսերահատատ ընկերութիւնը զարգանայ ածի, ի՞նչով, եթէ ո՛չ միաբանական ժողովներով. ձեր վաստակների հարիւր երրորդը, եթէ չ՚ինայէք ընծայել Ընկերութեան, նա էլ կ՚կարողանայ վերադարձուցանել լուսաւորութիւն տարածելով ձեր որդւոց մէջ. լաւ հասկացէք, որ այս դարը մեծ յեղափոխութեանց դար է ամենայն ազգաց համար, ազխտութեան, ծուլութեան, դանդաղութեան, անտարբերութեան, անզգամութեան, անմիաբանութեան և զանազան ախտից և բարոյական հիւանդութեանց սերմերը արմատախիլ առնելոյ դարէ։ Մարդկութիւնը այժմ պահանջում է հնամոլութեան մրուրը

թափել և օր ըստ օրէ դէպ'ի յառաջ դնալ, լուսաւորութիւն տարածելով։ Եթէ արուեստագործած սեաւ նաֆթը, մեզ կարողանում է պարդևել զդալի լոյս, ինչո՞ւ այս նիւթից ստացած օդտից մեք դժուարանում ենք նուիրել հասարակութեան գանձարանին մի քանի քանքար, երբ որ գիտենք, որ եթէ մեք չ'վայելենք, գոնեա մեր որդիքը պիտի վայելեն նորա պտուղները։ Դուք տեսանում էք թէ հին ձևի մեքենագործութիւնը և զանազան արհեստները այժմ անպատուելու մարդոյ պէս՝ ոչքան մոռացվածներ ու աչքից ընկած և սրանց փոխանակ կամաց կամաց սկսվում են տարածվիլ ամեն ուրեք նորերը, որ առաւելապէս թեթևացրած և դեղեցկացրածներ։ Ի՞նչու համար Մարդասիրական Ընկերութիւնը Ձեզանով չէ կարողանում ստանալ այն քան զօրութիւն, որ կարողանայ Ձեր որդիքներից մի քանիսը առաքել այնտեղ, ուր հեշտ ձևով կարողներ ուսանիլ նոյն արհեստները և կատարելագործուած վերադառնալ և մեր ազգի մէջ տարածել, ինչպէս անում են միւս ազգերը։ Ընդին գնացին պատրիարքական և տանուտերական կնոջ քաղցր օրերը, երբ մեր և միւս ազգաց պարները, որպէս բնութեան հարազատ և միամիտ որդիք, վայելում էին աշխարհիս բարութիւնը, ծնանելով ժամանակ ժամանակ ընտիր առաջնորդներ և զարմանալի աշխարհաշէն հերոսներ։ Այն ժամանակները քաղաքականութիւնը մարդկային ազգին որպէս թէ միաւորել էր մի անելևոյթ և գերբնական զօրութեամբ երկնաքաղաքացւոց հետ և մարդիկ ապատում էին լոյս կամ շնորհաշխութիւն 'ի վերուստէն. ժամանակիս թագաւորող և մեր կեանքը օր ըստ օրէ ճնշող նորաձևութիւններից յայնժամ ազատ էին առաւել

և ամեն ազգը, որի չորս կողմով պատած օտար ազգերը հնասէր ազգեր էին։ Ուրեմն մեզ վերահասել արդէն և հարկաւորէ մի նոր կեանք. տեսէք գիտութիւնը և իմաստութիւնը այսօր որքան աստիճան զուլաց և պարզուածէ մարդկանց մէջ. դարանք որպէս թէ փոքրիկ աստուածներ հանապազ ստեղծումեն 'ի շինութիւն աշխարհի զարմանալի գործ, ծիքներ, զոր ակն օ՛չ եռես և ունկն օ՛չ լուաւ։ Ամէն լսել որ աշխարհս որպիսի երկնաքարաքաշոց պէս, մինչև մեռանիլը պիտի խօսել կարողանայն միմեանց հետ հազարաւոր մղոնների հեռաւորութեամբ, մարք, առանց մի հնչիւն արձակելու բերանից, էլեքտրացած երկաթեայ թելի միջոցաւ, թողում ասել միւս անթիւ հնարագիտութիւնները-որով աշխարհս լցուածէ, ինձ անպէս է երևում, որ երկրագունտս գեռ նոր 'ի նորոյ սկսածումէ նորոգիլ և նոր նոր մարդիկ ծնանիլ նոր գիտութիւններով և նոր կեանքով։

Այնք լուսաւոր ազգերի իմաստութեան, գիտութեան և քաղաքակրթութեան նաև բնռնաւորուած պատումէ մի աջողակ քանի, որ առագասը բայի Հանապարհ դուրս չայ գնալի մեզ։ Մեր ամենողորմած Պայտրը կամենումէ մեր այս կողմերը, այսինքն Ընդր Կովկասեան երկիրները վերածողել, Սեաւ և Կասպից ծովերին միմեանց հետ երկաթուղիներով կապելով և միաւորելով։ Մարդասէրներ՝ խնդրեմ, որպիսի յեզուխոսութեանց, հորդորութեանց, փոփոխութեանց, աջողութեանց և զրկանաց, լինութեանց և պակասութեանց հանդէսներ չպիտի բացվին, առաւելապէս մեր Հայոց կենդանի հորիզոնում։

Մեր Կայսրը արդարև մեր ազգին ամենաողորմածաբար պահպանումէ և թևաւոր է, բայց մի և նոյն ժամանակ մեր բարօրութեան համար պահանջում ուսումն, սէր, միաբանութիւն, ջանք, աշխատութիւն և հաւատարմութիւն։ Ա՛յ Այաստանը օտար ազգերի ձեռից ազատելով, պարդևեց մեզ, Հայերին առաւել քան զ50 ամ ժամանակ, շնչաւորութեան, հանդստութեան մարմնաւոր և բարոյական առողջութեան այնպիսի ցաւերից և վնասներից, որոնց նշոյլները կամ հետքերը մինչ ցօրս հին Այաստանի քաղաքներում և գիւղերում բնակուող Այերը արեան և ոսկերաց մէջ տպաւորուած են դեռ. սակայն այսուհետև ըստ պահանջման ժամանակին սպասում, որ մենք քնից և հանդստութենից կշտացած, զարթնենք թև առնենք և դէպ՝ի յառաջադիմութեան և քաղաքականութեան ասպարէզը վազենք. Բայց աւաղ, մեր ողորմելի Հայերից շատերը, որոց երեսին բաղդը մի առ ժամանակ սկսել է ժպտել, քաղաքականութիւնը և մարդասիրութիւնը՝ հաղցրելն նորաձևութեան և հեշտասիրութեան զգեստով. զորանք որպէս թէ կուշտ են մարմնով, բայց չ՝գիտեն որ իւրեանց հոգինները սովածէ այն կենսատու հացից, որն որ կարողանում են գտնել միայն ազգասէրներ և կենցաղոյս մի քանի վայելմունքներից և արտաքին նորաձևութիւններից կամ՝ սուտ լուսաւորութիւնից զրկված, խոնարհամիտ Հայերը, որոնք չեն համարձակում տնքալ և օգտապարիկներով, կառաջ երիվարաց երկնից ամպերից վեր և մինչև մորրակների մէջ, մոաք և երևակայութեամբ արշաւել։

Մեր մէջ ո՛վ որ իմաստուն է, խելամուտ կ'լինի և չի զարմանալ այն բանում, թէ ինչպէս հեշտութեամբ մեզնից մի քանիսը կարողանում են փող աշխատելով հարստանալ և բարձրանում են շուայտութեան և վատնողութեան աշտարակի վերջին ծայրը, այլ կ'զարմանայ մարդկային բնութեան թուլութեան և տկարութեան վերայ, որ երբ աջողակ միջոցները մեր ձեռքին է լինում միառ ժամանակ, Աստուծոյ երկիւղը և մարդկութեան պարտքը ծալում մի կողմենք դնում և երեսներս աղդային գործերից, միաբանական ընկերութիւններից դէպ'ի ալևմուտ դարձրած, նախ արծաթին շինում ենք մի նոր Աստուած և նորան պաշտում, ագահութեան և անգոհութեան դռները բացելով և յետոյ մտանում ենք մի նոր ապարէզ փառասիրութեան, փոխարկելով մեր կեանքի և քաղաքաւորութեան եղանակը, որպէս թէ դէպ'ի լաւը, և թէ ունենք կանայք և դստերք, հազիւ դրանց մէջ գտնվում են և պարկեշտասունք, համեստք և անպճնասէրք, որերը, որպէս մի անշունչ և անհոգի էակներ, կամ պաճուճապատանքներ (կուկլայ) զուգում ենք և զարդարում, ինչպէս հեթանոսները իւրեանց չաստուածուհիքը կ'զարդարէին, և 'ի դուրս հանելով դրանց 'ի հանդէս, քիչէ մնում փող փըչենք և քարոզ կարդանք, ասելով՝ եկայք ժողովեցարո՛ւք յերկրպագութիւն ո՛վ արք և կանայք, զի առաւելագոյնս պճնազարդեալ են մեր կանայք, ոսկեհուռն և մարգարտաշար հանդերձք ոչա՝ ճառագայթիւք իւրեանց խափանեն զլոյս արեգական։

Այո՛ ը, իմ արենակից և աղգակից եղբայրք,

իմ՝այս խօսքերը թո՛ղ ձեր սրտերը չի վիրաւորեն։ Ընտրեցէք տայ, որ ձեր կեանքը բարօրութեան և օրհնեալ ուրախութեան և քաղցրութեան մէջ անցուցանէք, ձեր ո՛չ մի դլխի մի մազը չի պակասի և չ՝անանէք այն դառը ժամերը և չ՝լսէք այն սրտերից և երիկամուներից բղխած, որպէս ծուխ հառաչանաց և հեծութեան, ձայներ, որոնք նուազցնել մաշելն ներդութեան և անձկութեան ամեթեանը կրող, մեր արենակից հայ ազգի տկար և բազդաւորի մասը։ Մինթէ չենք գիտում, որ մեր կամ ձեր կանանց պահարանից կարողեմք հանել մի տկանակուա փոքրիկ մասանի, որոնք կ՝կերակրէ մի ամբողջ տուն աղքատ գերատանի մի ամբողջ տարի կամ մի թանկագին զգեստ մոխատկանների ճոպոպք ձեռքերով կարած, կարողէ մի աղքատ ուսանողի տալ հնար, որ իւր ուսումը գոնեա մի տարի շարունակել խաղաղ հոգով։ Ի՞նչպէս մեր ազգի յիշատակարանը կամ մեր կնաց գիրքը այսպէս փակ մնացել և կնքած պահուեմք մինչև մեր օրհասը կամ մահը ժամանելը և այն բոլոր մեր, որպէս թէ նոր կատարեալ մարդ դարձած, եթէ գեռ խղճմտանաց աչքերը այն քան չեն կուրացել, սկսում ենք ուրանալ աշխարհ, կին, զորդս և զարծաթ և որպէս մի ձշմարիտ հաւատացեալք և հաւատարիմ ազգի որդիք՝ կատկուեմք մեր գանձը ազգի որդոց, համարելով սրանց ինչպէս մեր հարազատ որդիներ, և այսպէս զրկուած այն երանելեան կեանքից, որ կինդանութեան ժամանակը պիտի վայելինք մեր մարմնոյ աչօք տեսանելով մարդասիրութեան կամ ազգասիրութեան քաղցր և հոտաւէտ պտուղները,-

Մեռաս բարեաւենք անում՝ աշխարհիս հետ և գնում՝ այնտեղ, ուր որ չենք կարող գտնել ո՛չ Մարդասիրական ընկերութիւններ, ո՛չ ուսման ծարաւի աղքատ երտասարդներ, ո՛չ մերկեր և ո՛չ քաղցեալներ։

Օձը, եթէ կամենում է պատել դուրսը, չի կարող ուղղութեամբ սողալ, այլ կ՚ծռուի մինչև որ հասաւ իր բոյնը, իսկ երբոր մտանում է իր բոյնը ուղղում է իր ընթացքը. այնպէս վարվում են և անկատար մարդիկ, քանի կենդանին, ուղիղ ճանապարհը թողած, այս կողմը այն կողմը ծռվելով՝ սրան և նորան թունաւորելով. անպատմելի և անբնութեան հոգսերի և զբաղմունքների տարով իւրեանց անձը, հատնում են և մտնում՝ մինչ ցրելիքման կամ իւրեանց յաւիտենական հանգստութեան տունը և մինչև մտանելը նոր՝ ի նորոյ սկսվում ուղղել և բարեկարգել իւրեանց բոլոր անկարգութիւնները։ Ահա մարդկային կուրութեան վերջին աստիճանը։ Մրջիւնները որ էակներից ամենափոքրիկ զեռունքն են, մեզանից առաւել խնամութեամբ են կատարում իւրեանց գոյութեան պարտքը, նոքա ձեռք ձեռքի առած, միաբանական ընկերութեամբ, ինչպէ՞ս կրթեալ և համաբարանոցում զարդացեալ էակներ, բնականապէս աշխատում են յօրուս հատարակութեան, յօրուս հարստութեան և յօրուս ներկայ և հանդերձեալ սիրելոց։

Պարծեմ ձեր դրախները մինչ՝ ցաւերի իմ երկարաբանութեամբս, ուրեմն խօսքերիս թերը կարելով դիմում եմ դէպ՛ի Ձեզ և խնդրում, միաբերան աղաղակեցէք առ Աստուած, որ նա մեր ամենա-

ողորմած Օգոստափառ Կայսեր և Նորին Կայսերական (մեծութեան) բարձրութեան Ռուսական Փոխարքային ամոյ զօրութիւն և երկար կեանք, որոյ Հովանաւորութեան ներքոյ վայելումէ մեր ազգը և մեր Ընկերութիւնը այս օրերը. Դա ամոյ ձեզ առողջ միտք և բացի ձեր հոգւոյ աչքերը, որ Ճանաչէք Ձեր պարտաւորութիւնները դէպ՛ի ազգը, դէպ՛ի Արդարարական Ընկերութիւնը և դէպ՛ի մեր Սուրբ Եկեղեցին. Հասկանաք թէ՝ ազգութիւնը մի մարդով չի լինում, մարդ, Ընդամ Ընկերութեան, միմիայն անունով չ՛պիտի կոչուի և պարտաւորութիւնը դէպ՝ի Եկեղեցին միմիայն քահանայից սովորական օրէնք ձիւաւորութիւն, երգերը և շարականները լսելը չէ։ Ներբոր այդ ամենը իմացաք և կատարեցիք, էլ ինձ բան չի մնալ Ձեզ ասելու. յետ այնորիկ, ինձպէս շատախօսների լեզուները պատանդուած կ՛ուենանք և դուք կ՛ունենաք իրաւունք կոչուիլ Հաւատարիմ որդիք Հայոց ազգի։ ամէն։

Եպիսկոպոսը Ս. Պարգեւեանց.

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

էջէն.	պոտ.	սխալ.	ուղիղ.
9.	24.	Ընկերութիւնը	Ընկերութեան
13.	22.	յիշել	յիշեալ
15.	3.	կարդա պայծառութեան	,,Համար,,
,,	27.	երրորդ	երկրորդ
19.	8.	օգուտը	յօգուտ
,,	18.	լսել	լռել
21.	15.	եաղանի	Ներանի
22.	7.	նշանակեալ	նշանակել
26.	23.	չխնայէ	չխնայէք
,,	28.	անդրամուրեան	անդրացողութեան
29.	12.	Հայերը	Հայերի
30.	16.	քաղաքաւորուէ	քաղաքավարուէ:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ՄԱՍԻԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ш. им. А. Масиляна

154.

2013